ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

Երևան-0010, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ԱՄՈՒՐ ԳՍՄ» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասը և ուսումնասիրելով ՀՀ վարչապետի աշխատակազմի և «ԱՄՈՒՐ ԳՍՄ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև կնքված ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-23/12-1 ծածկագրով ծառայությունների մատուցման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ ստորև ներկայացնում եմ «ԱՄՈՒՐ ԳՍՄ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ որոշումը.

Վարչապետի աշխատակազմի սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի (այսուհետ՝ գրասենյակ) 2023թ. կարիքների համար լուսանկարահանման և մասնագիտացված կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների մատուցման նպատակով՝ վարչապետի աշխատակազմի և «ԱՄՈՒՐ ԳՍՄ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 03.04.2023թ. կնքվել է N ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-2312-1 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ 7 790 000 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով:

Պայմանագրի 1-ին կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է լուսանկարահանման և մասնագիտացված կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն նույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի շրջանակներում Ընկերության կողմից մատուցվել է Պայմանագրով նախատեսված ծառայությունը՝ հետևյալ ծավալներով. 2023թ. մայիսի 2-ին մատուցված

ծառայությունների գումարը կազմել է 261 780 ՀՀ դրամ, այդ թվում՝ «մասնագիտացված կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայություններ»՝ 220 500 ՀՀ դրամ, «լուսանկարչական ծառայություններ»՝ 41 280 ՀՀ դրամ, իսկ 2023թ. մայիսի 31-ին Ընկերությունը տրամադրել է ևս 196 000 ՀՀ դրամի «մասնագիտացված կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայություններ»:

Պատասխանատու ստորաբաժանում հանդիսացող վարչապետի աշխատակազմի սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի 12.10.2023թ. թիվ ԶԿ/6809-2023 զեկուցագրով ներկայացված հավաստմամբ՝ գրասենյակը Ընկերության amurgsm@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեին պարբերաբար ուղարկել է պահանջվող ծառայությունների պատվեր-հայտեր, սակայն Ընկերության կողմից պատասխան չի ստացվել և Պայմանագրով նախատեսված ծառայությունները շուրջ չորս ամսվա ընթացքում չեն մատուցվել:

Ընկերությունը՝ վարչապետի աշխատակազմին հասցեագրված 14.09.2023թ. և 10.10.2023թ. գրություններով հայտնել է, որ անկանխատեսելի պատճառներով (*Ընկերության կողմից որակված որպես «ֆորսմաժորային իրավիճակ»*) պարտավորությունների կատարումն անհնարին է դարձել, ուստի Պայմանագրով նախատեսված ծառայությունները մատուցվել չեն կարող:

Պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից ***խախտումն էական է համարվում, եթե խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:***

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է պայմանագրով ստանձնած պարտավորությունները և, հիմք ընդունելով Վարչապետի աշխատակազմի սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի կոզմից ներկայացված՝ Պայմանագիրը միակողմանի լուծելու առաջարկը, վարչապետի աշխատակազմը՝ ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի մասնակի լուծել է «ԱՄՈՒՐ ԳՍՄ» ՍՊԸ-ի հետ 03.04.2023թ. կնքված N ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-23/12-1 ծառայությունների մատուցման պայմանագիրը: Միաժամանակ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-

րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված պահանջը՝ Պայմանագիրը լուծելու վերաբերյալ հայտարարությունը 17.10.2023թ. հրապարակվել է gnumner.am կայքում:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե ***խախտել է պայմանագրով նախատեսված*** կամ գնման գործընթացի շրջանակում ***ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը*** կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Այսպիսով, Պատվիրատուն արձանագրում է, որ «ԱՄՈՒՐ ԳՍՄ» ՍՊԸ-ն՝ հրաժարվելով Պայմանագրով նախատեսված ծառայությունները մատուցելուց՝ խախտել է Պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ առկա են ««ԱՄՈՒՐ ԳՍՄ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերությամբ սահմանված հիմքերը և որոշում եմ՝ Ընկերությանը ներառել նշված ցուցակում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ ԳԱՐԻԿ ԲՈՇՅԱՆ